

2010թ. կոռուպցիայի հետազոտություն Հայաստանի տնային տնտեսություններում

Հետազոտության համառոտ նկարագրությունը և նպատակը

ԱՄՆ ՄԶԳ Հակակոռուպցիոն գործողության մոբիլիզացիան ծրագրի (ՀԳՄՄ) շրջանակներում Հետազոտական ռեսուրսների կովկասյան կենտրոններ (ՀՌԿԿ)-Հայաստանն անցկացրել է կոռուպցիայի վերաբերյալ երեք ընտրանքային հետազոտություն, որոնց հիմնական նպատակը Հայաստանում կոռուպցիայի հանրային ընկալման չափումն ու հակակոռուպցիոն ջանքերի գնահատումն է: Առաջին հետազոտությունն իրականացվել է 2008թ. Հայաստանի բոլոր մարզերի տնային տնտեսություններում 1549 պատահականորեն ընտրված չափահասների (18 տարեկան և ավելի) շրջանում: 2009թ. անցկացված համանման երկրորդ հետազոտությամբ հարցվել է 1515, իսկ 2010-ին՝ 1528 չափահաս:

Հետազոտության գործիքները և մեթոդաբանությունը

Հարցաթերթը պարունակում է կոռուպցիայի ընդհանուր ընկալմանը, դրա դրսևորման ձևերին ու տարբեր ոլորտներում տարածվածությանը, կոռուպցիոն անհատական վարքագծին ու փորձին, կառավարության և ոչ-կառավարական կազմակերպությունների հակակոռուպցիոն գործողությունների մասին տեղեկացվածությանը և այլնի վերաբերող ավելի քան 80 հարց:

Ընտրանքն իրականացվել է բազմաստիճան քլաստերային մեթոդով՝ քաղաքային, գյուղական վայրերի և մարզերի նախնական ստրատիֆիկացմամբ: Պատահական ընտրանքի շրջանակ է ծառայել Հայաստանում էլեկտրացանցերի բոլոր բաժանորդների ցանկը: Տնային տնտեսություններում հարցվողներն ընտրվել են առաջիկա ծննդյան օրվա մեթոդով:

Տվյալների հավաքագրման մեթոդը. հարցաթերթերը լրացվել են դեմ առ դեմ հարցազրույցների միջոցով:

Հետազոտության որոշ արդյունքներ

2010թ. հետազոտությունը ցույց է տալիս, որ Հայաստանի քաղաքացիների գերակշռող մասը (ավելի քան 80 տոկոսը) շարունակում է կոռուպցիան լուրջ հիմնախնդիր համարել: Ավելին, նախորդ տարվա համեմատ, 2010թ. տասը տոկոսային կետով ավելացել է այն հայաստանցիների բաժինը, որոնց կարծիքով կոռուպցիայի մակարդակը վերջին 12 ամիսներին աճել է:

Հայաստանցիների մեծ մասը բավարարված չէ երկրի ընդհանուր և տնտեսական իրավիճակով (81 և 59 տոկոսը, համապատասխանաբար). ըստ որում, չբավարարվածների տեսակարար կշիռը 2010թ. 2008թ. համեմատ ավելացել է համապատասխանաբար 20 և 16 տոկոսային կետով: Հարցվածների կարծիքով Հայաստանի առջև ծառայած առավել կարևոր հիմնախնդիրները տնտեսական բնույթի են. գործազրկությունը, գնաճը, աղքատությունը, ընդհանուր բնույթի տնտեսական խնդիրները և ցածր եկամուտները շարունակում են մնալ մտահոգության առարկա: Գնաճի հիմնախնդիրը 2010թ. ավելի շատերին է մտահոգել, քան 2009-ին և 2008-ին (43, 20 և 33 տոկոս, համապատասխանաբար): Երկրի առջև ծառայած հիմնախնդիրների շարքում կոռուպցիան ըստ կարևորության 2010թ. զբաղեցրել է 6-րդ տեղը: Առավել կոռումպացված հաստատություններն են համարվել դատախազությունը և Կենտրոնական ընտրական հանձնաժողովը, իսկ ոլորտներ՝ առողջապահությունը, ընտրական համակարգը և կրթությունը:

Հարցվածները նշել են, որ կոռուպցիան խնդիրներ լուծելու կամ գործընթացներն արագացնելու միակ ուղին է: Իսկ կոռուպցիոն փաստերի մասին իրավասու մարմիններին չեն հայտնում, որովհետև վստահ չեն, թե որն է քայլեր կձեռնարկվեն, և որովհետև հայտնելը համարվում է հասարակայնորեն անընդունելի:

Հետաքրքիր է, որ Կառավարության և հասարակական կազմակերպությունների հակակոռուպցիոն ջանքերի մասին տեղյակ են եղել հարցվածների 19 և 7 տոկոսը, համապատասխանաբար:

Հետազոտության արդյունքների հասանելիությունը

Հետազոտության գործիքներն ու արդյունքները (հարցաթերթերը, հավաքագրված տվյալների բազաները SPSS ֆորմատով, վերլուծական համառոտ զեկույցները, շնորհանդեսների փաթեթը) և առնչվող այլ նյութեր հանրորեն հասանելի են www.crrc.am վեբկայքում: Այդ փաթեթը կարելի է ստանալ նաև լազերային սկավառակով:

ՀՌԿԿ

ՀՌԿԿ-ն Ադրբեջանի, Հայաստանի և Վրաստանի մայրաքաղաքներում հիմնված և Հարավային Կովկասում հասարակագիտական հետազոտություններն ու պետական քաղաքականության վերլուծությունը խթանելու նպատակ հետապնդող հետազոտական ռեսուրսների և ուսումնական կենտրոնների ցանց է: Նյու Յորքի Կարնեգի կորպորացիայի, Եվրասիա համագործակցություն հիմնադրամի և Երևանի պետական համալսարանի համագործակցությամբ գործող ՀՌԿԿ-Հայաստանը տեղացի գիտնականներին և պետական գործիչներին առաջարկում է հետազոտությունների, դասընթացների և համագործակցության բազմաթիվ հնարավորություններ:

CRRC-Armenia: Աբովյան 52, սենյակ 305, 307, 309, 312
Հայաստան, Երևան 0025
Հեռ.: +374 10 581 330
Ֆաքս: 374 10 581 450
Էլ. փոստ: crrc@crrc.am
URL: www.crrc.am

ՀԳՄՄ

Մեկնարկելով 2007թ. հուլիսին որպես համապարփակ հակակոռուպցիոն նախաձեռնություն, որի նպատակը կոռուպցիայի նվազեցումն է թե՛ տեղական, թե՛ համակարգային մակարդակներում՝ ԱՄՆ ՄԶԳ ՀԳՄՄ-ն օժանդակում է Հայաստանի Հանրապետության պետական մարմիններին և հասարակական կազմակերպություններին՝ 1)ստեղծելով բողոքների արձագանքման մեխանիզմներ և իրականացնելով համակարգային ու ընթացակարգային բարեփոխումներ, 2)մշակելով և իրականացնելով հակակոռուպցիոն նախաձեռնություններ ընտրված պետական մարմինների հետ, 3)օժանդակելով քաղաքացիական հասարակության կազմակերպություններին հակակոռուպցիոն գործողության համախմբմանն ուղղված նորարար մոտեցումներ մշակելիս, ինչպես նաև 4)բարձրացնելով հակակոռուպցիոն իրազեկության մակարդակը երիտասարդների և մեծահասակների շարքերում: ՀԳՄՄ-ն իրականացնում է Կասալս ընդ Ասոշիեյթս ընկերությունը:

ՀԳՄՄ: Տեղյան 105/1, սենյակ 804
Հայաստան, Երևան 0009
Հեռ.: +374 10 514 834
Ֆաքս: +374 10 514 836
Էլ. փոստ: maac@casals.com
URL: www.maac.am

Լրացուցիչ տեղեկությունների համար դիմեք՝ ՀՌԿԿ-Հայաստան, Եվգենյա Պատուրյանին, crrc@crrc.am և jenny.paturyan@crrccenters.org էլ-հասցեներով: